



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՅԻՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ**  
**ԼԱՍ ՎԵԿԱՍ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**  
**- Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ Ս. ՍԱՆԴՈՒԽՏ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ**  
**ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**

Նեւատա նահանգի Լաս Վեկաս քաղաքի արուարձաններուն բնակութիւն հաստատած հայ ընտանիքներուն հոգեւոր մխիթարութիւն եւ ծառայութիւն մատակարարող Արեւմտեան մեր թեմի հոգեւոր հայրեր հերթական դրութեամբ իւրաքանչիւր ամսուան երրորդ Կիրակին, Ս. եւ անմահ Պատարագ կը մատուցանեն եւ հոգեւոր քարոզ պատգամներով կը մխիթարեն հաւատացեալները: Իսկ տարուան ընթացքին Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Սրբ. Արք. Մարտիրոսեան, յաճախակի հովուական այցելութիւններով կը խրախուսէ, կը սրտապնդէ եւ մեծապէս կը սատարէ Լաս Վեկասի ծխական համայնքի հոգեւոր, կազմակերպչական գործունեութեանց եւ կարիքներուն:

Թեմական մակարդակի վրայ փոխադարձ այցելութիւնները Ազգ Առաջնորդարանի եւ ծխական շրջաններու՝ օգտակար եւ անհրաժեշտ են յատկապէս հոգեւոր, կազմակերպչական ծիրերէ ներս, սերտ գործակցութիւն եւ ջերմ մթնոլորտ ստեղծելու:

Այս շրջագիծէ ներս Շաբաթ, 5 Յուլիս 2008ի յետմիջօրէին, Ազգ Առաջնորդարան ժամանեցին Լաս Վեկասի ծխական համայնքի ներկայացուցիչներ, առաջնորդութեամբ ծխական խորհուրդի ատենապետ՝ Տիար Ատրուշան Արմէնեանի:

Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, ողջունեց հիւրերը եւ առաջնորդեց Ազգ. Առաջնորդարանի դահլիճը, ուր թեմիս Բարեջան Առաջնորդը սիրալիւր ընդունեց հիւրերը որոնք, առաջին անգամ կ'այցելէին Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց համալիրը: Լաս Վեկասի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքի ատենապետ Տիար Ատրուշան Արմէնեան ամփոփ գիծերու մէջ զեկուցեց հայ համայնքի աշխատանքներուն, ծրագիրներուն եւ դիմակալած դժուարութիւններուն մասին: Տիար Արմէնեան յանուն Լաս Վեկասի հայ համայնքին, շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը՝ չորրորդ քառամեակի մը համար անոր վերընտրութեան առիթով եւ յուշատախտակ մը նուիրեց: Հիւրերը յիշատակի լուսանկար առնելէ եւ յուշանուէրներ ստանալէ ետք, առիթը

ունեցան այցելելու Ազգ. Առաջնորդարանի գանազան գրասենեակներն ու ծանօթանալու բաժանմունքներու աշխատանքներուն:

## **ԿԻՐԱԿԱՍՈՒՏՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**

Նոյն օրը՝ Շաբաթ, 5 Յուլիսի երեկոյեան ժամը 6ին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ մասնակցութեամբ եկեղեցականներու, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան եւ անոր կից «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, Ս. Թադէոս առաքեալի եւ առաջին նահատակ Ս. Սանդուխտ կոյսի տօնին առթիւ, տեղի ունեցաւ Կիրակամուտքի հոգեպարար ժամերգութիւն: Արարողութեան կը մասնակցէին Լաս Վեկասէն ժամանած հայ համայնքի հիւր ներկայացուցիչները, Զայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան անդամ-անդամուհիներ եւ բարեպաշտ հաւատացեալներ:

Ժամերգութեան աւարտին, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Քրիստոնէական հաւատքի լոյսը հայոց մէջ տարածող Ս. Թադէոս առաքեալի հոգեւոր առաքելութիւնը, Եդեսիոյ եւ Զայաստանի գանազան գաւառներու եւ յատկապէս Արտագի մէջ ծաւալած քարոզչական գործունեութիւնը: Արտագի մէջ էր որ Առաքեալը կը հանդիպի օրուան Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտի, որ հրապուրուած Քրիստոսի սիրոյ կրօնի յեղաշրջիչ վարդապետութիւններէն, կ'ընդունի քրիստոնէական հաւատքը եւ կը մկրտուի, հակառակ իր հօր՝ Սանատրուկ արքայի կամքին ու սպառնալիքներուն եւ որուն հետեւանքով ալ կը բանտարկուի եւ յետագային կը նահատակուի: Կը նահատակուի նաեւ Թադէոս առաքեալը, 66 թուին: Թադէոս առաքեալի ջերմեռանդ քարոզութեան եւ Սանդուխտ Կոյսի Քրիստոսի հանդէպ անխախտ հաւատքին շնորհիւ, 3,500 նորահաւատ հայեր քրիստոնէայ կը մկրտուին: Ապա, Զայր Սուրբը վեր առաւ ոչ միայն Թադէոս առաքեալի, այլեւ քրիստոնէական հաւատքի առաջին հայ նահատակ Ս. Սանդուխտ իշխանուհիի՝ աշխարհիկ փառքէ, հաճոյքներէ վեր մնալու առաքինազարդ նկարագիրը յատկանշող գիծերը, որոնք օրինակ պետք է ծառայեն իւրաքանչիւր հայուհիի եւ մանկամարդուհիի, անոր անխախտ հաւատքը, նախանձախնդրութիւնը եւ քրիստոնէական անանցանելի ճշմարտութիւններուն հանդէպ հաւատարմութիւնը՝ ժառանգելու համար յաւիտենական կեանքը:

Արարողութեան աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

## **PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE LAS VEGAS PARISH**

## **EVENING SERVICES ON THE FEAST OF ST. THADDEUS AND ST. SANTOOKHT**

On the afternoon of Saturday, July 5<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the

Armenian Apostolic Church of Las Vegas. It was the first visit of the delegation, which was headed by parish council Chairman Mr. Adroushan Armenian, to the Prelacy.

During their meeting, in which Very Rev. Fr. Muron Aznikian also participated, Mr. Adroushan reported to the Prelate on the successes and challenges of the parish as well as on their future activities. On behalf of the Las Vegas community Mr. Armenian congratulated the Prelate on his re-election and presented him with a memento. The Prelate presented the guests with souvenirs, after which they had the opportunity to tour the headquarters to get better acquainted with the various departments of the Prelacy.

In the evening, the Prelate presided over services in observance of the Feast of St. Thaddeus the Apostle and St. Santookht, the first martyr of the Armenian nation, which took place at the "St. Dertad and St. Ashkhen" Chapel and the adjacent "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The members of the Las Vegas parish participated in the services as did members of the Armenian Church Youth Association.

At the conclusion of the service Very Rev. Fr. Muron Aznikian briefly presented to the faithful the lives of St. Thaddeus the Apostle and St. Santookht.

A reception followed the service.